« նման է գորտան, և ապին որպէս զգորտ.
« միան պինա է. զաֆրանով և քացախով շուռ-
« վայ կու լինի » : — լգ. Ձանկրրի պալղոի :

« Ձյաքան ձկունը (այլ) կան որ չեն ուտեր.
« (և են) լդ. Ձի պալղոի, մեծ է քան
« երկու զոմշու մի չափ. կրիայի նման է,
« գլուխն նման է արջու, ոտքն և ձեռքն
« ածխայն նման են արջու. ագի ունի որպէս
« կրիայի. գլուխն մազ ունի որպէս արջու,
« և ի վերայ ձեռացն և ոտիցն այլ մազ ունի.
« թէ գտանէ զմարդն՝ ուտէ և պատառէ և
« սպանանէ » :

չե. Քէխտ պալղոի : — լգ. Քոռիք պա-
լղոի : — լհ. Օքռոզ պալղոի. « մեծ է,
« մինչեւ 3 կանգուն կու լինի. գլուխն նման
« է եզան. Ջհուտ ապգէն զատ մարդ չի ուտեր.
« միան կարմիր է որպէս գնեբկ : — լը.
« Ջուկ մի այլ կայ Ցհնիկ անասի ասեն.
« գլուխն և մազն՝ որպէս գկնկանն. երեսն
« մարդոյ նման, գեղեցկատեսիլ, և ձեռքն
« այլ մարդոյ նման. միջէն ի վայր ձկան
« նման. մարդասէր է, թէ գտանէ զմարդն՝
« զմազն ձգէ փաթաթէ և ինքն քաշէ. ան-
« չափ խաղայ որ մարդն մեռանի, ապա
« թողու և երթայ յատակս ծովուն ի բուն
« իւր » : Հին Ջունաց առասպելեալ Ծովու
գաստքն, Ընդդայքն և Պարիկքն յիշեցընէ :

լբ. « Գազան մի այլ կայ որպէս գշունն
« գլուխն և ոսկին, զոր կուռնտուզ ասեն »,
և Ջրշուն կամ Շնջըրի :

խա. « Հոռմ բառով Ոռնիակ ասեն. կռնակն
« ոսկերք մի կայ զոր Ագաթ. Պհնրի գիպիտ.
« և Թուրք՝ Ցհնկիզ քօփուղի ասէ. ոսկերիչքն
« այնոր մէջն կու Թափեն ինչ որ լինայ, թէ
« ոսկի և թէ արծաթ. աւազի տեղն գայն
« կու բանեցընեն. եւս առաւել Ցոանգաց
« ոսկերիչքն. մատանին անոր մէջն կալիպ
« (կազապար) կու անեն և կու Թափեն : Այլ
« կենդանիս որպէս ագիք երկան երկան կախ
« որպէս ոտս և ձեռս ունի. և լեղին սեւ է
« որպէս Թանաք. Թէ գիր գրես՝ կու լինի.
« Դասք մի Մոռրգեպ (Séche) ասեն, աչքի
« ունի. և Թէ լուանաս և եփես, գարձեալ
« մանարես, քացախով և զաւրանով շուռվայ
« շինես, տաքդեղով և պահարով, լաւ կու
« լինի » :

խա. Ըխթափոր հոռմի բառով : — խբ.
Պէշպարմաք : — խգ. Թաչխփառ, հոռմի բա-
ռով Ըստաքոս (Ecrevisse) : — խգ. « Բա-
« դուրեայ. խեցգետնին նման է. քան գնա
« այլ մեծ է ամենեւին նման է խեցգետնին.
« միայն կռուցներն սեւ է », և այլն : —
խդ. Ֆնկհա. Հայն Թաչխփառ ասէ : Ներ և
անվարժ գրչով մէկն՝ քանի մի Թուղթ առաջ
պարապ տեղ մի գրեր է. « Հայրէն՝ Ֆռահա,
« հոռմայերէն.. Թուրքի Ֆնկհա. 12 ոտ ունի.
« ուռով՝ մարդ խճնէ » (խածնէ կամ կրծէ) :
Նոյն գրիչն ուրիշ գատարկ երեսի մը վրայ
գրեր է և գայս. « Ջուկ մի կայ որ Թուրքի
« բառով Ոմհտոզ? ասեն. մեծութիւն մինչեւ
« կանգուն մի լինի. լաւ հացի կերակուր է » :

խե. Քարիտեայ : — խգ. Կերևզուտ.
« Քաղցը գետերն կու լինին. խաշել ուտել
« աղով աղէկ է. անգէն է » : խէ. Լոհռուստայ.
« Ըստաքոսին նման է. միայն խածանելիք
« չի ունի », և այլն :

խը. « Ագնիհ. Թաչխփառի նման է. բոլոր
« է կէճէպն. հայելի կու շինեն. միան որպէս
« Լոհռուստայի նման է, խաշել ուտելն որպէս
« Ըստաքոս, անուշ է » :

Զկանց նկարագիրն այսով վերջացընէ Աբրահամ, յետոյ ութ ժամակ աւելցընէ, թէ և ձկանց բաժնին մէջ այլ գրած է խե-ցեմորթ կենդանիները, բայց այս յետին ութն մանրիկք են, և վերնագրէ. « Այսմ հետէ ըս-
« կիսքն արասցուք ծովային ժըժմկնանցն, որ
« կէճէպ ունիցին, որպէս Միտեան :

« ա. Միտեան. զոր կէճէպ ունի. և զմէջն
« ուտեն խուռմ (հուռմ), և եփեն ձիթով
« ասպկեն և խաշեն և փիլաւ անեն : —
« բ. Ըստրիտեան. կէճէպ ունի. ագի է,
« մէջն անուշահամ է, խուռմ ուտելն, խաշելն
« և ձիթով էփելն, և այլ ցեղուցեղ կերա-
« կուր կու լինի : — գ. Փիճե (Պին. Պի-
« նայ). որպէս զՄիտեան է, և այլ մեծ է.
« կէճէպ ունի որպէս զմիտեայ, մէջն կու
« խաշեն և շուռվայ կու եփեն զաւրանով և
« քացախով և պահարով : Լու մէջն մազ մի
« կայ, զեղ է ախանջացաւի :

« դ. Դառաք (կտին.) որպէս Ըստրիս-
« տեան նման է. ապա որպէս զանոր նախշ
« ունի. կէճէպ ունի, մէջն ուտեն խուռմ և